# ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Արձանագրություն N3

քաղաք Երևան տասնինն ապրիլի երկու հազար տասնչորս թվականի

ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի ապրիլի 19-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց նոտարների որակավորման ստուգման քննությունների թեսթային փուլի արդյունքները:

**ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝**

Ա. Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ն. Բալայան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ

Հ. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի օգնական

Դ. Մխեյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ

Ռ. Մուկուչյան - Գյումրի նոտարական տարածքի նոտար

Ռ. Սահակյան - Կենտրոն նոտարական տարածքի նոտար

Օ. Հակոբյան - Նոր Նորք նոտարական տարածքի նոտար

Տ. Գրիգորյան - Գավառ նոտարական տարածքի նոտար

Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Լ. Իսկանդարյանը:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

1. Նոտարների որակավորման ստուգումների առաջին փուլի ամփոփում:
2. Նոտարական քննությունների խնդիրների փուլի ընթացակարգային հարցերի հետ կապված քննարկումներ:
3. Կազմակերպչական այլ հարցեր:

**ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝**

**Օրակարգի առաջին հարցի** հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ որակավորման ստուգման համար դիմել էր 49 թեկնածու, որից 3-ի դիմումը մերժվել էր օրենքով առաջադրված պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Արդյունքում որակավորման ստուգմանը թույլատրվել է մասնակցել 46 թեկնածուի: Մասնակիցները հանձնել են թեստավորման փուլը 2 խմբով, յուրաքանչյուրը՝ 23 թեկնածու: Միաժամանակ, ևս 2 հոգի չեն ներկայացել ստուգմանը, առանց նախապես հանձնաժողովին ծանուցելու: Նշվեց, որ

քննություններին չմասնակցած երկու անձանց կողմից վճարված պետական տուրքը ենթակա չէ վերադարձման: Մինչդեռ դիմորդ, այն է Ղուշչյան Ստելլան, Ստեփանյան Էմման և Մանուկյան Ալմաստը, ում դիմումը մերժվել էր, կարող են ներկայանալ ՀՀ արդարադատության նախարարություն և ստանալ համապատասխան տեղեկանք, որի հիման վրա նրանց կվերադարձվի վճարված պետական տուրքի գումարը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Ամփոփելով վերոշարադրյալը, նոտարների թեկնածուների որակավորման ստուգումների առաջին փուլին մասնակցել է 44 դիմորդ, որից 38-ը հաղթահարել են 80 տոկոս ճիշտ պատասխանների շեմը և անցել են որակավորման ստուգման երկրորդ՝ խնդիրների փուլ:

Ա. Օրբելյանը առաջարկեց՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 789-Ն որոշմամբ (վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1463-Ն որոշմամբ) հաստատված կարգի պահանջները, հրապարակել հարցաշարը՝ ճիշտ պատասխանների տարբերակով, ինչպես նաև մասնակիցների ամբողջական ցանկը նշելով թե դրանցից ովքեր են հաղթահարել 80 միավորի շեմը:

Հանձնաժողովի քարտուղարը նշեց, որ համաձայն գործող կարգի բողոքարկումը կարող է իրականացվել պաշտոնական արդյունքները հրապարակելուց մեկ ժամվա ընթացքում: Արձանագրությունը ուղարկելուց հետո անձինք պետք է իրավունք ունենան մեկ ժամվա ընթացքում բողոք ներկայացնել հանձնաժողովին՝ այն գրավոր ներկայացնելով կամ ուղարկելով lusine.iskandaryan@yahoo.com էլ փոստի հասցեին:

**Օրակարգի երկրորդ հարցի** հետ կապված քննարկվեց երկրորդ փուլի անցկացման ձևաչափը: Որոշվեց որակավորման ստուգման այս փուլը անցկացնել համակարգչի միջոցով՝ մասնակիցներին հնարավորություն տալով օգտվել նաև տպագիր նյութերից: Նշվեց, որ արգելված է օգտագործել ցանկացած հեռահաղորդակցության միջոցներ, ներառյալ՝ ինտերնետը: Որոշվեց նաև ապահովել թեստավորման ընթացքում օգտագործվող համակարգիչները համապատասխան ծրագրերով, ներառյալ՝ Arlis, MS Word և KDWin: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցներին տրամադրվելու են համակարգիչներ, դիմորդներին արգելվեց ստուգմանը բերել իրենց անձնական համակարգիչները, պլանշետային համակարգիչները, սմարթֆոնները:

Ա. Օրբելյանը առաջարկեց, որպեսզի մասնակցի կողմից արված յուրաքանչյուր ոչ էական սխալի դեպքում հանվի 1 /մեկ/ միավոր: Նաև առաջարկվեց, որպեսզի էական համարվեն այն սխալները, որոնք հանգեցնում են գործարքի կամ պայմանի անվավերության (առոչինչ և վիճահարույց, օրենքին հակասող գործարքներ), հանգեցնում են գործարքի կնքված չլինելուն, խախտում են նոտարական գործողության էությունը, կողմին կամ կողմերին զրկում են իրավունքներից (սեփականության, ժառանգական և այլն): Առաջարկվեց խնդիրներում՝ գործարքների առոչնչությանը բերող սխալների առկայության դեպքում նշված խնդիրը գնահատել զրո միավոր, անկախ մնացած սխալների առկայությունից:

**Օրակարգի երրորդ հարցի** հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ տեխնիկակապես հնարավոր է քննության անցկացումը մեկ դահլիճում: Առաջարկվեց նստեցումը (կոնկրետ համակարգիչների մոտ) իրականացնել վիճակահանությամբ: Առաջարկվեց, մասնակիցներին հրավիրել առավոտյան ժամը իններին /9:00-ին/, որպեսզի իրականացվի վիճակահանությունը և այլ կազմակերպչական հարցերը լուծվեն, և ուղիղ առավոտյան ժամը տասին /10.00/ սկսվի քննության իրականացումը: Նշվեց որ համակարգիչները նույնպես միացած չեն համացանցին:

Ն. Բալայանը առաջարկեց, որպեսզի համապատասխան արձանագրությունը, փուլի անցկացման վայրի և ժամի մասին տեղեկատվությունը և մասնակիցների ցուցակները ուղարկվեն մասնակիցների էլ. հասցեներին:

Հանձնաժողովի քարտուղարը առաջարկեց թեստավորման փուլը անցկացնել ապրիլի 26-ին, ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեում, 14-րդ հարկում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի համակարգչային լսարաններում:

Ա. Օրբելյանը առաջարկեց, որ հաշվի առնելով անցած քննությունների փորձը, որակավորման ստուգման երկրորդ փուլը նույնպես իրական ժամանակով հեռարձակել ինտերնետի միջոցով: Առաջարկվեց ինտերնետով դիտելու հղումները հրապարակվի ինտերնետում առնվազն որակավորման քննությունների օրը՝ մինչև որակավորման ստուգման փուլի սկիզբը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաստատել նոտարների որակավորման ստուգումների թեստավորման փուլը անցած մասնակիցների ցանկը և հրապարակել այն ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում:

*ընդունվեց միաձայն*

2. Հաստատել որակավորման ստուգման խնդիրների փուլի անցկացման վայրը՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 14-րդ հարկ, ապրիլի 26, ժամը առավոտյան տասին (10:00) երկու խմբերի համար: Միաժամանակ որոշվեց մասնակիցներին հրավիրել առավոտյան ժամը իններին (9.00):

*ընդունվեց միաձայն*

3. Դիմորդները նոտարների որակավորման ստուգմանը պետք է ներկայանան որոշմամբ հաստատված օրը և ժամին, միաժամանակ իրենց հետ ունենալով անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթուղթ):

*ընդունվեց միաձայն*

4. Որակավորման խնդիրների փուլի համար որոշվեց ոչ էական սխալների համար դիմորդի բալը նվազեցնել մեկ միավորով, իսկ գործարքների առոչնչությանը բերող սխալների առկայության դեպքում նշված խնդիրը գնահատել զրո միավոր, անկախ մնացած սխալների առկայությունից:

*ընդունվեց միաձայն*

5. Որոշվեց որպես էական սխալ համարել այն բոլոր թերությունները, որոնք հանգեցնում են գործարքի կամ պայմանի անվավերության (առոչինչ և վիճահարույց, օրենքին հակասող գործարքներ), հանգեցնում են գործարքի կնքված չլինելուն, խախտում են նոտարական գործողության էությունը, կողմին կամ կողմերին զրկում են իրավունքներից (սեփականության, ժառանգական և այլն):

*ընդունվեց միաձայն*

6. Որակավորման ստուգման երկրորդ փուլը իրական ժամանակով հեռարձակել համացանցի միջոցով: Դիտելու հղումները որոշվեց համապատասխան տեսախցիկները տեղադրելուց հետո՝ ոչ ուշ քան քննության օրվա առավոտը տեղադրել նախարարության www.moj.am համացանցային էջի համապատասխան հայտարարությանը կից:

*ընդունվեց միաձայն*

7. Դիմումը մերժված երկու դիմորդներին էլ. փոստի հասցեներով տեղեկացնել իրենց՝ պետական տուրքի ետ վերադարձման իրավունքի մասին:

*ընդունվեց միաձայն*

Արձանագրությունը կազմված է 4 էջից:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ